

ԱՆՆԱ ԱԲԱԶՅԱՆ

ՀԱՅԵՐԵՆԻ ՀՈՒՈՎՆԵՐԻ ՊԱՏՄԱՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ
ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԳՐ. ՂԱՓԱՆՑՅԱՆԻ
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Գր. Ղափանցյանը XX դարի հայ ականավոր լեզվաբաններից մեկն է: Լայն է նրա գիտական հետաքրքրությունների շրջանակը՝ ընդհանուր լեզվաբանություն, լեզվաբանության պատմություն, հայագիտություն, ազգագրություն, պատմություն, հին, մանավանդ կովկասյան լեզուների պատմահամեմատական քննություն, հայ ժողովրդի և հայոց լեզվի ծագումնաբանության խնդիրներ:

Գր. Ղափանցյանը իր մի շարք աշխատություններում հայոց լեզվի պատմության հարցերը քննելիս անդրադարձել է գրաբարի հոլովակաՆ համակարգին, սակայն առավել հանգամանորեն այն քննել է «Հայոց լեզվի պատմություն» աշխատության VII գլխում, որ կրում է «Քերականական կառուցվածքը» /գրաբարի-Ա. Ա./ խորագիրը: Գրաբարի հոլովները նա քննում է պատմական հայեցակետով և ցույց է տալիս նրանց, ինչպես ինքն է ասում, հնդեվրոպական բնույթը: Թե՛ քերականական-ձևակազմական, թե՛ իմաստային հատկությունները բնութագրելիս հետևում է Անտուան Մեյեին:

Հենց սկզբից նշում է, որ գրաբարի հոլովումը կատարվում է 2 թվով եզակի և հոգնակի, ունի 7 հոլով, որոնք իր ներկայացրած շարակարգով ունեն հետևյալ պատկերը՝ ուղղական, հայցական, սեռական, տրական, ներգոյական, բացառական և գործիական կամ ուղղական, հայցական, ներգոյական, սեռական, տրական, բացառական, գործիական:

Հերթականությունը խախտվում է ըստ այն բանի, թե որ հոլովման դեպքում որ հոլովը որի ձևն ունի: Մինչև իսկ անվան եզակի և հոգնակի թվերի հոլովական շարակարգերը տարբեր տեսք ունեն՝ ըստ հիշյալ սկզբունքի: Նշելով, որ գրաբարում «սովորական հոլովումը լինում է 7 տեսակի՝ ա,ի,ու,ո,մ,ր,ղ, որոնցից I չորս տեսակը ձայնավոր տիպի են»¹, նա ներկայացնում է այս I չորս տեսակի հոլովումների հարացույցները կամ, ինչպես ինքն է կոչում, պարադիգմաները:

	ա-թեմա	ի- թեմա	ս- թեմա
Եզակի թիվ			
Ուղղ., հայց.	ամ	բան	զգեստ
Սեռ., տր., ներգ.	ամ-ի	բան-ի	զգեստ-ու
Բացառական	ամ-է	բան-է	զգեստ-է
Գործիական	ամ-աւ	բան-իւ	զգեստ-ու
Հոգնակի թիվ			
Ուղղական	ամ-ք	բան-ք	զգեստ-ք
Հայց., ներգ.	ամ-ս	բան-ս	զգեստ-ս
Սեռ., տր., բաց.	ամ-ազ	բան-իզ	զգեստ-ուզ
Գործիական	ամ-աւք	բան-իւք	զգեստ-ուք

Օ թեմա			
Եզակի		Հոգնակի	
Ուղղ. հայց., ներգ.	գետ	Ուղղական	գետ-ք
Սեռ., տր., բաց.	գետ-ոյ	Հայց., ներգ.	գետ-ս
Գործիական	գետ-ով	Սեռ., տր., բաց.	գետ-ոզ
		Գործիական	գետ-ովք

Ահա այսպիսի շարակարգով է հիլովները քննում լեզվաբանը:

Այս սկզբունքից բխում է.

1. Ղափանցյանը հիլովի ցուցիչ է համարում միայն վերջավորությունը, ըստ այդմ հիլովման տիպը /«թեման»/ որոշում է՝

ա/ ըստ սեռականի, տրականի և ներգոյականի վերջավորության, որը նույնն է ա թեմայի եզակի թվի 3 հիլովումներում /ամ-ի/,

բ/ ըստ սեռականի, տրականի և բացառականի վերջավորության, որը ևս նույնն է ա թեմայի հոգնակի թվի սեռական, տրական, բացառական հիլովներում /ամ-ուզ/ և օ թեմայի եզակի և հոգնակի սեռական, տրական, բացառական հիլովներում /գետ-ոյ, գետ-ոզ/:

2. Նման շարակարգը նորություն էր ավանդաբար ընդունված շարակարգերի մեջ: Հին, նաև ժամանակակից քերականները մեկ տողի վրա իրար հաջորդելով դրել են և այժմ էլ դնում են նույն ծակագծությունն ունեցող հիլովները, որոնք են ուղղականը ու հայցականը և սեռականն ու տրականը: Սակայն Ղափանցյանի առաջարկած տեսքով հարացույց /«պարադիգմա»/ չի եղել: Եվ, պետք է ասել, այս առաջարկությունը չընդունվեց հայագիտության մեջ:

3. Հեղինակը թեև ուղղակիորեն չի նշում, սակայն շարադրանքից որոշակիորեն երևում է, որ նա նախդիրներին հիլովակազմիչ դեր չի հատկացնում, այլապես բացառականը չէր դնի սեռականի և տրականի կողքին, ոչ էլ ներգոյականը մերթ ուղղականի, մերթ հայցականի, մերթ սեռականի ու տրականի կողքին, քանի որ թե՛ բացառականը և թե՛ ներգոյականը նախդրիվ հիլովներ են:

Բացառականը եզակիում է վերջավորության , իսկ հոգնակիում սեռական-տրականի վերջավորության հետ միասին նաև ի /յ/ նախդրով է կազմվում. ներգոյականը՝ նույն նախդրով և եզակիում սեռական-տրականի ձևով, հոգնակիում հայցականի /բաց. —ի բանե, յանձնե, ի բանից, յանձնից; ներգ. —ի բանի, յանձին, ի բանս, յանձինս/:

Այս սկզբունքը, սակայն, նա հաճախ խախտում է և, ինչպես կտեսնենք ստորև, հոլովներ է կազմում նաև ի/յ/ նախորի առկայությամբ /նախդրիվ ներգոյական/: Իրապես առանց ի/յ/ նախդրի ոչ բացառական հոլով կա, ոչ ներգոյական: Ել չենք խոսում այն մասին, որ վերջին հոլովի՝ ներգոյականի առկայությունը գրաբարում առիասարակ կասկածելի է և հեռու է ստույգ լինելուց:

4. Նախդրիվ հոլովներ չընդունելով՝ Ղափանցյանը հետևում է Ա. Սեյեին և ճիշտ նրա մտան ստանում երեք կամ չորս հոլովական ձևեր՝ մայած թե որ հոլովման /«թեմայի»/, որ թվի հոլովական հարացույց է կազմում:

5. Չընդունելով նախդրիվ ձևեր՝ հեղինակը հոլովների ձևերի նույնություն է թույլ տալիս, դրանով իսկ հոլովի կարգը տարբերակում է ոչ ըստ ձևի կամ ձևի և իմաստի միասնության, այլ ըստ իմաստի, որ հաճախ նույնանում է կիրառության հետ:

Դեղինակը հատուկ քննության նյութ է դարձնում գրաբարի հոլովումները:

«Սովորական հոլովում» ասելով՝ հեղինակը նկատի ունի կանոնավոր հոլովումը, որը, ինչպես տեսանք, ստորաբաժանում է 2 ենթախմբերի՝ ձայնավոր և բաղաձայն տիպերի: Ձայնավորները նշում է լատինական տառերով և կոչում է թեմա (a, i, o, u): Այս բոլոր տիպերը նա քննում է որպես հնդեվրոպական նախատիպերի գոյացություններ և դրանց զարգացման արտահայտություններ:

«Հայերենի հոլովման հիմնական չորս հոլովումները, - գրում է նա, - մոտենում են հնդեվրոպական նույն տիպերին, որոնցից i և u թեմաները իրոք պատկանում են ձայնորդ «աթեմատիկ» տիպերին, ինչպես ունենք r, l, n հոլովման աթեմատիկ տեսակները»²: Ղափանցյանը պատմահամեմատական քննությամբ ցույց է տալիս, որ, ասենք, գրաբարի o (ոյ) հոլովումը (քուն, քնոյ-քնով) համընկնում է սանսկրիտ sṛāṇāh, լատ. sonnus, հուն. hypnos բառերի հոլովմանը, a հոլովումը /ամ-ամի-ամե-ամալ/ զուգադիպում է սանսկր. saṁā բառին, արուեստ և st /փախուստ, թաքուստ, զուլեստ, ուտեստ/ վերջածանցով բառերի ի հոլովումը զուգադիպում է հին սլավոնական юность, молодость և մտան (т) կազմությամբ բառերի հոլովմանը, ինչպես юности, молодости: Այդպես են հոլովվում, ըստ հեղինակի, նաև խեթերենի —astի վերջույթ ունեցող գոյականները: Ինչ վերաբերում է u հոլովմանը (զարդ-զարդու), այն համեմատում է հունարեն artys /հարդարանք/ բառի «աթեմատիկ» հոլովման հետ:

Ղափանցյանի բերած նորություններից մեկը այս հարցում այն է, որ նա առաջինն է նկատում գրաբարի հոլովման տիպերի փոփոխություններն ու զարգացումը կապված գրաբարի շեշտի դիրքի հետ:

«Հայոց լեզվի շեշտի վերջըներ լինելը, - գրում է նա, - և վերջին վանկի և ծայնավորի տարբեր փոփոխումներ կրելը, մինչև նրա անկումը ներառյալ, հիմք են ծառայել նաև հոլովածների փոփոխության և անկման»³: Ըստ հեղինակի՝ գրաբարը հոլովակա՛ն տեսակետից բավակա՛նին մոտ է հնդեվրոպական նախատիպ լեզվին: Հայերենը նրա 8 հոլովներից պահել է 7-ը կորցնելով միայն կոչականը: Մինչդեռ, օրինակ, հունարենը, որ պահել է միայն 5 հոլով»:

Ղափանցյանը հնչյունափոխության հետ է առնչակցում ոչ միայն հոլովման տիպերի աստիճանականությունները, այլև տարբեր հոլովների նախապես ունեցած ձևերի կորստի հետևանքով ձևային նույնացումները: Այս օրինաչափության արդյունք է գրաբարի հատկապես եզակի ուղղականի և հայցականի նույնացումը:

Ղափանցյանը գրաբարի հոգնակի հայցականի ս-ն առնչակցում է հնդեվրոպական նախատիպի հետ, սակայն, նրա կարծիքով հնդեվրոպական պարզ ս հնչյունը հայերենում ըստ օրինաչափության պետք է ընկներ:

Հայցականի ս-ի կենսունակությունը հեղինակը բացատրում է, ճիշտ է, ենթադրաբար, որ գրաբարի ս վերջավորությունը իր նախնական վիճակում եղել է ոս, ինչպես որ եղել է հունարենի կրետական բարբառում և գոթերենում /ոս/: Ասել է թե՛ հոգնակի հայցականի թեքույթը հին հայերենում ևս անփոփոխ չի պահպանվել, ենթարկվել է հնչյունափոխության, այսինքն՝ նախնական ոս-ը վերածվել է ս բաղաձայնի, «ինչպես միս, «мясо» (< menso), ամիս «месяц» (լատ. mens-is) և նման այլ դեպքերում:

Ձարգացնելով հիշյալ կանխադրույթը հեղինակը հանգում է հետևյալ նույնքան կարևոր եզրակացությանը: «Քանի որ, - գրում է նա, - հայոց այդ հոլովածը ծառայում է նաև ներգոյական հոլովի համար /ի միտս, ի սիրտս/, ուր հնդեվրոպական լեզուներում եղել է *-su /հնդիրանականում, բալթիկ-սլավոնականում/ և հունարենում *-si, ապա ենթադրվում է, որ այդպիսի մի ձև եղել է և հայերենում: Բայց ըստ հայոց հնչյունաբանական օրենքի՝ ծայնավորով վերջացող բառերի վրա ավելացած su կամ si ներգոյականի հոլովածը պետք է ընկած լիներ /2 ծայնավորների մեջ ս բաղաձայնը ընկնում է/, ուստի ենթադրվում է, որ «աթեմատիկ» բների (r, l, n հոլովումների վերջում) պահվող -su / si/ վերջավորությունը ըստ անալոգիայի անցել է նաև թեմատիկ հոլովաբներին (a, i, o, u)»⁴:

Ղափանցյանը իրավացիորեն նկատում է, որ գործիականի հոլովակազմությունը ա, ո, ի, ու ծայնավորներով վերջացող բներում նույնական է թե՛ եզակիում և թե՛ հոգնակիում, եթե վերջինս արտահայտվում է ք հոգնակերտով:

Գործիականի վերջավորությունը -աւ-ն է (-aw), -ուվ-ը (-ou), -իւ-ը (iw) և -ու-ն (-u):
Վերջինս գոյացել է հնագույն *ուվ (uw) ձևից:

Համեմատության համար հեղինակը բերում է «հունարեն-ֆրի-հին-ֆրի /սանսկրիտ-ա-բհիհ/, հոմեր.-օփի, հոմեր.-*սփի /սանսկրիտ. ս-բհիհ/, հոմեր. փի /օրինակ՝ wiphi «ուժգին կերպով»/ ձևեր: «Հայերենը, ինչպես տեսնում ենք, եզրափակում է նա,- իր w, (v) վերջավորությամբ, որը հին *bի կամ *m ձևերով ստեղծում են գործիական, բացառական և տրական հոլովածներ (սանսկրիտում և ավեստայում՝ միայն հոգնակի գործիականի համար. սանսկրիտ.- բհիհ, ավեստ. bis)»⁵:

Ասվածին կուզեինք ավելացնել միայն մի բան: Մեր համոզմամբ գրաբարում հնդեվրոպական նախատիպի այդ w, (v) /նաև ք/ վերջավորության ֆունկցիաների սահմանափակումը միայն 1 հոլովի՝ գործիականի ձևակազմության մեջ թերություն չպետք է համարել կամ նահանջ: Եթե հնդեվրոպական մյուս լեզուները հիշյալ վերջավորությամբ գոյացնում են, գործիականից բացի, նաև բացառական և տրական հոլովներ, չենք կասկածում, թե դա լեզուների հոլովակազմության առավելություններից է: Լեզվաբանության պատմությունը փաստում է, որ քերականական ձևերի նույնացումը վաղ թե ուշ հանգեցնում է քերականական համապատասխան իմաստների մթազմման և կորստի, ինչը քերականական կարգի վերացման առաջին պայմանն է:

Գրաբարի անվան հոգնակի սեռական, տրական և բացառական հոլովների ց վերջնահնչյունի ծագումը հայ քերականագիտության մեջ մինչև վերջ լուսաբանված չէ: Հր. Աճառյանը առհասարակ կասկածի տակ է առնում հնդեվրոպական նախալեզվում հոգնակի սեռականի գոյությունը: «Գիտունները, -գրում է նա,- այժմ կասկածելի են համարում հոգնակի սեռականը իբրև հոլով»: Ջանազան լեզուների մեջ հոգնակի սեռականի մասնիկն է -օո և ոչ թե -օո /այսպես հսլ., իռլ., գերմ./, հիթիթերենն էլ չունի -օո. նկատենք, որ այս վերջավորությունը կցվում է ո՛չ թե բունին, այլ արմատին, որից հետևում է, թե նա մասնիկ է և ոչ թե վերջավորություն: Ուրիշ խոսքով Հնդեվրոպական /նախամայր լեզվի-Ա. Ա./ քերականությունը հոգնակի սեռական հոլով չուներ նախապես, այլ նրա տեղ գործ էր ածում բարդությունը, ածանցական մի ձև կամ բացառական հոլովը /ինչպես եզակիում, ուր սեռականը մեծ մասամբ նույնանում է բացառականի հետ»⁶:

Ս. Բուզգեն տակավին նախանցյալ դարի վերջին փորձում էր լուսաբանել ց հոլովակերտի ծագումը: Նրա կարծիքով՝ այդ ց-ն ոչ թե հոլովակերտ ձևույթ է, այլ բառակազմական ածանց, որի նախատիպն է sko-ն, ինչպես հին սլավոներենում nebeskǫ «երկնքի», որ առաջացել է neber բնից (վպոՏ = երկինք), ինչպես ռուսերենում чюдес, колесо, кудесник և այլ es ձևով բներ⁷:

Այս կնճռոտ խնդրին անդրադարձել է նաև զր. Ղափանցյանը և առաջարկել իր տեսակետը: Նա մերժում է ց մասնիկի հնդեվրոպական ծագման հնարավորությունը և, ելնելով հայերենում փոքրասիական և կովկասյան լեզուներից մնացած ենթադրյալ շերտերի մասին իր մեզ արդեն ծանոթ կանխադրույթից, գտնում, որ դա ևս կազմավորվել է ասիանիկ լեզուների հիման վրա:

«Ես կարծում եմ, - գրում է նա, - որ այդ ց վերջավորությունը հնդեվրոպական չէ. ինչպես վրաց լեզուն ունի k'alak'-ta «քաղաքաց», ուր t'(= th) վերջավորությունը ունի 3 ֆունկցիա հոգնակիում /սեռ., տր., բաց./, այդպես էլ փոքրասիական /ասիանիկ/ լեզուների /Յայասայի/ հիման վրա կազմավորվել է մեր այս «ց» թեքույթը, ինչպես և հոգնակիակերտ «ք» մասնիկը»⁸:

Ղափանցյանը իր դրույթը փորձում է հաստատել վկայակոչելով Ն. Մառին, որը զորաբարի նշված «ց» մասնիկը և վրաց նույնապաշտոն «ե»-ն աղերսակից էր համարում ըստ ծագման: Իբրև հիմք ընդունում էր այն իրողությունը, որ նշված հնչյունների փոխանակումը հանդիպում է և այլուր, օրինակ վրաց թիխա (thixa) «կեղտ, ցեխ»-ը համընկնում է մեր «ցեխ» արմատին, կամ մեր «թխել» (տպիճ) և վրաց ցխոբա տպիճ, испекать(ся), выпекать(ся), согреться яѣна (о населке): Սա էլ կարելի է համեմատել մեր «թուխս» բառի հետ:

Ըստ Ղափանցյանի համեմատելի է նաև մեր բարբառային -ից /-ուց<*ուից/ բացառականի վերջավորությունը վրաց գործիական-բացառական it ձևի հետ, որը կա և բևեռագիր խեթերենում /-it/, և հիերոգլիֆ խեթերենում եզակիում և հոգնակիում -ta ձևով»: Հետաքրքրությունից զուրկ չէ Ղափանցյանի ներկայացրած նաև այն կռվանը, որ վերաբերում է ութ>ուց հնչյունափոխությանը, որը տեղի է ունեցել բարբառներում բացառական հոլովածևի մեջ, ինչպես հնութ-հնուց, մանկութ-մանկուց, հորութ-հորից, մորութ-մորից, այսինքն հորս, մորս ժամանակներից:

Հոգնակիակերտ և հոլովակերտ ց-ի ծագման հարցը, այսուհանդերձ, չի կարելի վերջնականապես լուծված համարել:

Ղափանցյանը թեև թերահավատորեն է վերաբերվում, բայց և այնպես ինչ-որ չափով հավատում է նաև Ա. Մեյեի վարկածին ի վերջավորության ծագման վերաբերյալ:

Պետք է ասել, որ ոչ Ղափանցյանի, ոչ Ա. Մեյեի «առեղծվածային» դիտարկումները այս հարցում հավատ չեն ներշնչում:

Խնդիրն այն է, սակայն, որ նշանավոր լեզվաբանը «ի» հոլովման համապատասխան ձևեր գտնում է նաև հնդեվրոպական լեզուներում, և այլ կերպ չէր էլ կարող լինել: Հայերենը հնդեվրոպական լեզու է, և Ղափանցյանը իր գիտական գործունեության վերջին շրջանում իրական բազում և անհերքելի փաստերի ճնշման տակ վերջիվերջո ստիպված էր խոստովանել հայերենում հնդեվրոպական բառային և քերականական զգալի, անուրանալի որակ կազմող նստվածքի առկայությունը:

«Հայոց հողովման «ի» թեման,- գրում է նա,- ունի համապատասխանը և ուրիշ հնդեվրոպական լեզուներում, ինչպես՝ իծ (զործ. հոլ. իծիւ), որը ստացվել է հնդեվր. *eghi-ից և նույնն է սանս. nihib, ավեստա ažiš, հուն. οφις ձևերի հետ: -ti մասնիկով բառերը այնպես են հողովված, ինչպես՝ աթ («գիշերելու տեղ»), aw -արմատից, որն ունենց նաև ագանիմ, «իջնել գիշերելու համար» և կա հուն. iavw և αἴσις բառերում»⁹:

Ընդհանրապես պետք է նշել, որ Ղափանցյանի դիտարկումները հին հայերենի հողովակազմության, սրա հետ կապված՝ նաև ստուգաբանության ու բառակազմության շատ հարցերի վերաբերյալ դուրս են գալիս ավանդական քերականագիտական ըմբռումների շրջանակներից և անկախ նրանից՝ դրանք ընդունելի են թե ոչ, անկասկած մտորումների տեղիք են տալիս, դրանով իսկ նպաստում հայագիտական մտքի զարգացմանը: Այդպիսի դիտարկումներ քանիցս տեսանք վերը: Այստեղ հարկ ենք համարում անդրադառնալ նրա մեկ այլ կանխադրույթի, որը վերաբերում է (ը) ն վերջույթին գրաբարում առկա ոտ(ը)ն, ձեռ(ը)ն, դուռ(ը)ն և նման մի քանի բառերում և դրանց հողովմանը: Նրա կարծիքով՝ այդ և նման բառերի վերջնահանգ ն — ն եղել է եզակի հայցականի հողովակազմիչ: Իբրև օրինակ՝ նա բերում է եզակիում ոտն, ձեռն, դուռն բառերը, որոնց հոգնակիներն են ոտք, ձեռք, դուրք: «Հաստատապես,- ընդգծում է նա,- եզրակացվում է, որ հին ժամանակ, թերևս մեր էրայից դեռ շատ առաջ, եղել է եզակիում նույնպես ոտ, ձեռ, դուր_ և այլն, որոնք հայցական հողովում պետք է կցված ունենային ը(ն) և ուրեմն այդ հայցական հողովածները պետք է հնչվեն ոտն, ձեռն, դուռն»¹⁰: Սակայն, ըստ հեղինակի, քանի որ գրաբարի հողովական համակարգում անվան ուղղական հողովածնը եզակի թվում նույնանում է հայցականի հետ, այսինքն վերջինիցս չի տարբերվում հողովակազմությամբ, ապա նմանաբանության (անալոգիայի) օրենքով հայցականի հիշյալ հողովածնը դարձավ եզակի ուղղականի հողովածն: Ըստ այդմ՝ «հայոց ոտն նախկին հայցականը, որ հար և նույնն է հուն. ποδα ձեռն, որ արտացոլում է հուն. χείρα և այլն, դարձան նաև ուղղականներ և սկսեցին հողովվել ոտն-ոտին-ոտամբ, ձեռն-ձեռին-ձեռամբ և այլն, թեև հոգնակիում մնացին հին ձևերը՝ ոտք-ոտից-ոտիք, ձեռք-ձեռաց-ձեռօք»¹¹:

Ուշագրավ են նաև դուռն բառի ձևափոխությունները: «Դուռն բառածևը,- շարունակում է նա,- որ ստացվել է հնագույն դուր-ից (համեմատել հուն. δορα, գոթ. daur, գերմ. Յիմր, լիտվ. durys և այլն), որպես եզակի հայցական ոչ միայն անցել է նաև եզակի ուղղական, սեռական և այլն, այլ նաև հոգնակի՝ դրուք, դրանց և այլն, թեպետ մնացել են և հին դուրք, դրաց, դրաք ձևերը»¹²:

Թեև Ղափանցյանը շատ վստահ է իր եզրակացությունների մեջ («հաստատապես եզրակացվում է»), բայց նրա վարկածը դեռ հեռու է հաստատված լինելուց, այն չի կարելի ընդունված համարել հայ քերականա-

գիտության մեջ: Իսկ այն փաստը, որ նման բառեր բաղադրության մեջ են մտնում ոչ թե ենթադրյալ նախատիպ բնով (ծեռ, ոտ, դուռ), այլ ենթադրյալ եզակի հայցական հոլովով (ծեռն, ոտն, դուռն – ձեռնպահ, ձեռնասուն, ոտնաման, դռնապան և այլն) խոսում է, համեմայն դեպս, ոչ թե ի վնաս, այլ հոգուտ Ղափանցյանի տեսակետի:

Հայցականի, նաև այլ հոլովների թեքությամբ բաղադրությունների օրինակներ գրաբարը տալիս է, հմմտ. օրենքդիր, օրենքգետ, կենքագիր, բանքարկու և այլն, որտեղ ս –ն հոգնակի հայցականի ցուցիչն է, և բարդությունը կազմվում է ոչ թե ուղղականի, այլ հայցականի հիմքով:

Ղափանցյանը իր տեսակետի մեջ հետևողական է: Նա գրաբարի ոչ միայն անվան հոլովման արմատներն է որոնում ասիական ու կովկասյան լեզուների նախատիպերում, այլև դերանվան, մասնավորապես անձնական դերանունների:

Համաձայնելով համդերծ Յուբշմանի, Մեյեի, Աճառյանի և այլոց հետ, որ ես և դու դերանունների ուղղական նախատիպերը հնդեվրոպական ծագում և մյուս թեք հոլովների համդեպ անկախ ձևավորվածություն ունեն, նա, այսուհանդերձ, ես-ի մեջ փորձում է գտնել ուրարտական ու խուռիտական շերտ: «Ես և դու ձևերը,- գրում է նա,- բացատրված են որպես հնդեվրոպական, բայց «ես» ձևը փոխանակ եծ(ec)-ից պիտի բացատրվի, ըստ իս, ուրարտական ieše (=iese) և խուռիտերենի iša (=isa) մույնանիշ դերանվանական ձևի ազդեցությամբ՝ կոնտամիսացիայով (բաղարկությամբ -Ա. Ա.)»¹³:

Ղափանցյանը համաձայն չէ նաև հոգնակի երկրորդ դեմքի դուք դերանվան ուղղական հոլովի նախատիպի ծագման մասին ընդունված տեսակետին և շատ պարզ մեկնություն է տալիս նրան: «Դուք ձևը,- ասում է նա,- ուզում են հանել յս-k՝ ձևից, ի նկատի ունենալով լիտ.գոթ. -jūs ավետ. -jus «Դուք» ձևերը, որը ցոճ (դուք) ձևը անմիջապես հանել «դու»-ից՝ ավելացած ք հոգնակերտ մասնիկը»¹⁴:

Համաձայնելով Մեյեի այն տեսակետին, թե հայցականի մեզ և ձեզ հոլովածները ծագել են mens և dzens նախատիպերից՝ նա կարծում է, որ դրանք նախապես եղել են *մես և *ձես, որով տարբերվել են տրականի մեզ, ձեզ ձևերից և ավելի ուշ առնամանության օրենքով ստացել են տրականի տեսքը և ձևով համընկել վերջիններին:

Գալով բացառականին՝ այստեղ ևս հեղինակը փորձում է գտնել ասիական հետքեր: Ըստ նրա՝ բացառականի մեզեն, ձեզեն ձևերը կազմվել են տրականից, իսկ «մենք և ձենք բացառականները,- շարունակում նա,- ըստ իս՝ առաջացել են ասիանիկ հողի վրա և ինչպես խեթերենում ունենք šumel ձևը և apel «նրանց», իին խեթերեն šumenza(ո)«ձեր» և apelza(ո) «նրանց» կամ թերևս նաև šumenza «ձեզնից», apelza «նրանցից», ինչպես թարգմանում էին առաջ,

որպես բացառականի ծև, այդպես էլ խեթերենի մեջ մնացած այդ ասիանիկ ծևի մնամությամբ ունենք հայերենում մենջ և ձենջ»¹⁵:

Թեև ձևակերպումը այնքան էլ հստակ չէ, սակայն միտքը հասկանալի է. հեղինակը մենջ և ձենջ ձևերը բխեցնում է ասիական նախատիպից:

Գ. Ղափանցյանը նկատում է մի կարևոր օրինաչափություն՝ կապված ստացական և հարաբերական որոշ դերանունների հոլովման հետ:

Նշելով, որ այդ դերանուններից մի քանիսը հոլովվում են —ո(օ) հոլովմամբ, բայց որոշ շեղումով, ինչպես՝ որ-որոյ-որում, որմէ, որով, մեր-մերոյ, մերում, մերմէ, մերով և այլն, նա նկատել է տալիս ում մասնիկի հետագա ծավալումը, իմաստափոխությունը և ձևավորվելը որպես հոլովակազմիչ նոր թեքույթ: «Ում մասնիկը, - գրում է նա, - կար արդեն Աստվածաշնչում («ի հնումն և ի նորումն»), որ հետո դառնում է ներգոյական հոլովի նշան հունարենից թարգմանված որոշ գրվածքներում, իսկ այժմ՝ մեր արևելյան բարբառներում և գրական լեզվում»¹⁶:

Իսկպպես մեծ է Գր. Ղափանցյանի ավանդը գրաբարի հոլովական համակարգի բնագավառում: Նրա աշխատություններում կուտակված տեսական ու փաստական հարուստ նյութը անկասկած կօգնի հայերենի հոլովական համակարգի հետագա հետազոտությանը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Գ. Ղափանցյան, Գայոց լեզվի պատմություն, հին շրջան, Եր., 1961, էջ 254:
2. Գ. Ղափանցյան, էջ 255: Աթեմատիկ /*athématique, atematisch, unthematisch, athematic, atemático*/ ասելով հեղինակը նկատի ունի կառույց, որտեղ վերջավորությունը անմիջապես կցվում է արմատին՝ առանց հիմքակազմիչ թեմատիկ բառակազմական ձևույթի օգնության: Գնմտ. Ж. Марузо, Словарь лингвистических терминов, М. 1960, стр. 43:
3. Տե՛ս ն. տ., էջ 256: Ընդգծումը մերն է-Ա. Ա.:
4. Տե՛ս նույնը:
5. Տե՛ս ն. տ. էջ 258
6. Գր. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. Գ., էջ 343:
7. S. Bugge, Etruskisch und Armenisch, Christiania, 1890, էջ 61:
8. Գ. Ղափանցյան, Գայոց լեզվի պատմություն, հին շրջան, էջ 258-259: Ընդգծումը մերն է-Ա. Ա.:
9. Տե՛ս էջ 261:
10. Տե՛ս էջ 266:
11. Տե՛ս նույնը:
12. Տե՛ս նույնը:
13. Տե՛ս էջ 267-268:
14. Տե՛ս էջ 268:
15. Տե՛ս էջ 269:
16. Տե՛ս էջ 270-271: